

ՀԱՅ-ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀՈՎԻԻ  
ՎԵՐ ԱՐՔԻՆ ՇՄԱՌՈՆԵԱՆՆ ԶՈՐԸ  
ՄԱՅՐ ԵՆԵՂՆԻՈՅ ՄԷՋ

Այնպիսի արարատ չնչասպաս կ'հետևի  
ամիսներէ ի վեր քաղաքական հոլայ դէպ-  
քերու: Ինչպիսիքներ կրնան լուսն ըլլալ,  
բայց անոնք արձագանքը կ'որոտայ տա-  
կաւին Պայքանեան լեռներուն շուրջը:  
Գարտէսներ կ'զծուին, բանակներ կ'քայ-  
քային, պետութիւններ կ'ստեղծուին,  
ազգերու և կայսրութիւններու ճգնա-  
ժամն է անոնք և երկարածիք:

Այս քայն այս մեծաշղթայ դէպքերը  
իրարու կ'աջադրեն փոթորկալից՝ հա-  
մետ ազգ մը համեստօրէն կ'ստնէ իր  
գիրքերու գիւտին հազար հինգ հարիւր մե-  
տան և տպագրութեան շոր հարիւր մե-  
տանը: Հրեաներու պայքան աղմուկէն  
յետոյ քիչեր պիտի լսեն Հայ կոչակի  
ձայնը, որ այս առաւօտ կ'սկսի թրթռալ  
Հնդկաստանի հեռաւոր անկիւններէն, կը  
հնչէ յաղթական պիտակ Մասեաց ստո-  
րոսը, կ'արձագանքէ արմատուշ Հայաս-  
տանի ձորերուն մէջ և կատարներուն  
վրայ, կ'արձարանայ Պոլսոյ խառնիճաղանձ  
բազմութիւններու ժխտելիքը, կ'սա-  
ւառնի Հունգարիոյ դաշտերուն և Անգ-  
լիոյ բազմաթիւ քաղաքներուն վերէն,  
կ'անցնի նոր Այնթափ և Քալիֆորնիոյ  
ծայրագոյն եզերքներուն վրայ, պիտի  
խառնուի վերջապէս աղօթքի և փառա-  
բանութեան մեղեդիներուն:

Թող այնպիսի գրադի տակաւին, եթէ  
կ'ուզէ լրանակներու և դիւանագէտներու  
աղմուկից գործերովը: Ինչ կ'արժեն այս  
ամէնը մեր Սուրբերուն՝ Սահակի և Մես-  
րոպի՝ յիշատակին քով: Անոնք աղօթ-  
քով և արցունքով որոնցին փնտռել աշ-  
գին փրկութիւնը հողիներուն փրկութեան  
մէջ և տասնէ հինգ դիպուածալից դարեր  
կ'արձանէ իրարու վրայ իրենց վկայու-  
թիւնը թէ ուղիղ էր անոնց այդ որո-  
նումը: Թող տունէ Հայն իր ազգային  
տունը ինչ փոթի եթէ այնպիսի անտես  
առնէ զայն, կ'րաւէ որ մաքի և հոգիի  
յաղթանակներու յիշատակն է որ կ'փա-  
ռաբանուի և ոչ թէ պատերազմի և  
նարիճիներու յիշատակը: Մեր ուրախու-  
թեան օրն ոչ յոյս համար կրնայ սուգի  
օր սեպուիլ: Արեան իճերու մէջ ջախ-  
ջախուած դիակներու վրայ չէ որ փնտ-  
նեցին մեր սուրբ շէնքերուններն իրենց  
ազգին կեանքի և փառքի ճանապարհը,  
թագաւորութեանց աւերակներուն վրայ  
չէ որ կ'կանգնի Հայութեան տաճարը,  
մեր բարձրները չի քանակնել որ ուրիշներու  
ստորնացումը, մեր կեանքի պայմանը չէ  
մեր թշնամեաց մասնացումը: Մեր ազգա-  
յին տուն համայն մարդկութեան տունը  
պիտի ըլլար եթէ մարդկութիւնը գիտ-  
նար:

Այս ասոր մէջ է անա ճշմարիտ  
մեծութիւնը Սահակի և Մեսրոպի: Այն-  
պիսի ժամանակ մը, անակի օրերու մէջ,  
անք հայրենեաց սրբազան հոգն անոնք  
թշնամեաց ոտից կոխան կ'ըլլար, երբ  
Հայոց պաշտպան բանակներն անհամեմատ  
չափաքարին մէջ ուժասպաս կ'իյնային և  
կ'մարտ թագաւորութեան աստղը, անոնք,  
որոնց յիշատակը հարաբերութեամբ կ'սո-  
նենք այսօր, տարին իրենց փառաւոր և  
մնայուն յաղթանակը: Զինքերու պար-  
տութիւնն անոյս և անօգնական չձգեց  
զանոնք: Անոնք մաքի և հոգիի մեծու-  
թեան փափաքեցան և մաքի և հոգիի  
կեանքը կտակեցին զայլք սերունդներու  
ուն: Հայացոցին գիրքերու գիրքն և  
յուսերժացուցուց զայն Հայուն համար:  
Գրիտաթիւ Ս. Անտարանը տուին Հայուն  
ձեռքն և ըսին «Կառչէ ասոր և պիտի  
սպիրիտ»: Եւ դարերէ, Յազկերտներու,  
Ճինկիզներու, Համիտներու դարերը կ'ան-  
հետին որոտալից և խաւարամած, մինչ  
Հայութիւնը կ'ստնէ մաքի և հոգիի հա-  
զարհինգ հարիւր մասնայ Յորհանը: Ըմ-  
բանեց օրուան տօնին թանկագին մե-  
նակութիւնը: Դարձնեց նորէն մեր ու-  
շաբդութիւնը մաքի և հոգիի կեանքին  
Սուր առնողը սուրով պիտի ինչայ: այս  
օրուան յաղթանակը կրնայ վաղը պար-  
տութեան մատուցիլ, հայրենողները՝ հա-  
լածանքի մէջ կ'կորսուին, ամէնէն խո-  
րանակը քաղաքագէտն իրմէն խորաման-  
կին պիտի հանդիպի ուշ կամ կանուխ:  
Այն զորովարները, այն դիւանագէտները  
որոնք այսօր իրենց ստուերով այնպիսի  
կ'իմանին, հազար հինգ հարիւր տարի  
վերջն ո՞վ պիտի յիշէ զանոնք, բայց հա-  
զար հինգ հարիւր տարի վերջն եթէ մնա-  
ցած ըլլայ այնպիսի վրայ միակ Հայ ժը,  
պիտի զայն և խոնարհի Սահակի և Մես-  
րոպի գերեզմանին առջև և տուն անոնց  
երեք հազար ամեակը:

Կ'րաւէ որքան զբաղեցանք արտաքին  
քաղաքականութեամբ: Անոնք որ իրենց  
ճակատագրին ուրիշներուն կ'յանձնեն,  
անոնք որ իրենց քայտութեան համար  
օտարներու ողորմութիւն կ'մտաբան, տխուր  
ճակատագրի մը և արգաստեղի վիճակի  
մը միայն կրնան հասնիլ: Մեր ներքին  
կեանքին դաճանքը, բարձրացնելը միայն

և հոգին, մեր այնպիսիները թափենք  
հոն ուր թշնամեաց աստիճաններ կարող  
չէ աւերներ գործել, ունենանք բան մը  
որ օտարներու բարեհաճութենէն անկախ  
ըլլայ և եթէ մեր երկիրը լուսաղոյն օր  
մը տեսնէ՝ զարգացած մաքով և զար-  
գացած հոգիով ողջունենք այն օրը, իսկ  
եթէ պիտի ստիպուին խոնարհեցնել մեր  
գլուխները նորոտ հարուածներու ներքև,  
գոնէ մեր միաքը բարձր մնայ և մեր հո-  
գին մաքուր:

Մեր երկիրը ցաւատանջ փորձառու-  
թեան յետն վիճակ է այս: Դիտէ՞ք թէ  
ինչ կ'ըսէ այսօր Հայութեան ձայնը ծայ-  
րագոյն արեւելքէն մինչև ծայրագոյն  
արեւմուտքը: Ատրանտանէն Մաղադական  
Մենք այն ազգն ենք որ կ'արուածուինք  
բայց չենք ընկճուիք, մեր օճանները  
քանդեցին, բայց մեր պատիւը կ'մնայ  
անաղարտ, մեր տաճարները կործանե-  
ցին, բայց մեր հաւատքը պահպանք: Մենք  
այն ազգն ենք որ դարարու երկունքով  
մէջ մեծ ճշմարտութեան մը արժեքացաւ թէ  
միտքն անպարտելի է և հոգին՝ յաւիտե-  
ական:

Ա. Գ. ՇՄԱՌՈՆԵԱՆ

ՀԱՅՎԱԿԱՆ ՅՈՐԵԼԵԱՆՆ  
Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Փիլիսոփ, Հոկտ. 14.

Ամսոյս 13ին, Կիրակի օր, նախածնունդ  
տեղոյս Գրասիրաց Ընկերութեան, տեղի ունե-  
ցաւ տարեկան գիւտին և Հայ տպագրութեան  
Յորհանի հանգումները տեղոյս եկեղեցիին  
մէջ: Տեսար՝ Կրօն Միջաշէլեան եւ Թ. Թագ-  
ւորեան բանաստիճաններէն բրին օրուան նի-  
քին վրայ, Վարձարանաց աշակերտներն արտա-  
սանու թիւներն եւ երբեք երկրջին եւ օճան, ա-  
ռաջողութեան Տիար Քիրանցեանի, որ բա-  
ւական լու մարգած էր տպքն երգելու ար-  
ուեստին մէջ:

Ամենայն շայն Կարողութիւնը, Ազգ. Գրասիր-  
արարանին, Վենետիկի եւ Վիեննայի Միութեա-  
նեան Միաբանութեանց հետգրներն ուղղակեցան  
Հանգըստն յետոյ Խորհրդարանին մէջ խօսք  
դարձաւ Հիմնական Դրամագլխին մասնակցելու  
հանգանակութեամբ: Տիար Ս. Միտիւսեան առա-  
ջարկ մը բերաւ, որպէս զի ի յիշատակ Մարկոս  
եւ Մեսրոպայ եթէ կարելի է, դրամագլուխ մը  
կազմել և յատկացնել զայն տեղոյս մէջ բա-  
նայու մատուար զատկեցանք մը: Կիմազիտն  
ուրիշ օտար վարձարաններ յամախոյ տղայաց  
զատակասելու Հայ գրականութեան և Ազգ.  
Պատմութիւնը իրենց մէջ վառ պահելու Ազգային  
զգացումը, Տատ բանար առաջարկ մըն էր որ  
կ'եղեղայաններ Փիլիսոփէի Հայ հասարակութեան  
ուշադրու թեան:

Տակալի է ըսել թէ հոս այլ Քաղ. Խորհուրդին  
եւ Գրասիրաց Ընկերութեան միջեւ խղիւղ մը տե-  
ղի ունեցաւ եկեղեցիին դուռը, որ բարեբախ-  
տաբար լուսեցաւ ցաւալի հետեւաբար:

Պարտեան վերջն պատերազմին մէջ  
մեռած էր զեր-Գիղայիտ Գ. Վարդապետեան,  
իր մտնուան քառասունքին առթիւ կատարուե-  
ցաւ Հոգեհանգստան պաշտօն, Յիշատակելի է  
իր վերջին նամակն ուղղուած իր ընտանիքին,  
զոր մէջ բերաւ բանասիր Տիար Գ. Միտիւսեան:  
իր խօսքն ուղղելով իր վնջ, կ'կտակէր որպէս  
զի իր տղաքը ստանան Ազգային կրթութիւն,  
եւ այնպիսին Ազգայն համար, եկեղեցին լու-  
ցուն էր Հայ եւ օտար հանդիսականներով Խօսե-  
ցան նաեւ փաստաբան Միտիլի եւ Գուկար քա-  
հանայ մը, որ իր բարեկամեցած է Քիրանցեան  
ժամանակն ի վեր: Տեսար Վարդապետեան վառ-  
վառն արձանարկին մ'էր: Կաշխատը իր  
զգակահաններու բարիք ընելու եւ վերջն ան-  
գամ տեղոյս Հայ պատմագրական փողովին  
պատուիրակ նշանակուած էր Փիլիսոփէի ազգայնաց  
կողմէ: Իր մալը զգալի պակաս մը կ'ընդուն տեղ-  
ոյս Ազգայնաց մէջ:

Քաղաքական զէպքերու պատճառաւ,  
մտաւորապէս 2,000 հոգին անիկ զաղթած էր  
հոս: Տեղոյս զաղթականաց յանձնարարով, մա-  
սամբ մեղմանցելու համար ազգայնաց խղճալի  
վիճակը, քնակարան, հարուստ եւ ուտելի մա-  
տակարանք. մեծ մասամբ թէն ցրուած են եւ  
ոմանք իրենց տեղերը վերադարձած, բայց զեռ  
մաս մը կայ վարձարանին մէջ եւ մանկապար-  
տէրը զեռ կարելի չէ եղած բանալ:

Հայտնութեան վերջ գործերը բիշ շատ  
բացուած են. մեծ պաղիկ մեակու թիւները տեղի  
կ'ունենան. չէտերու ամիսները անհամեմատ  
բարձրացած են. չէք Բաթր 5—6՛, Լոնտոն  
26.80, մարք 1.30 եւն. եւն. ինչ որ մտաբարձու-  
մէն վերջ ահազին վնաս մըն է վաճառականնե-  
րուն համար:

Հայ պաշտօնէից ձեռամբ հիմնուած «Ասպա-  
րէզ» անուն ընկերութիւնը որ 1904ին կազմուած  
է, 1914ին նպատակ ունի վերակառուելու, իր  
զրամագլուխը բարձրացնելով 100,000 Քր.Ի. Ա-  
ռաջին շահախնակեան Հայ ընկերութիւնն է որ  
ցարդ կ'շարժարական շրջանակներուն մէջ. դրամա-  
տաբար քաղաքին մէջ հաստատուած «Արեւելի»  
եւ Թուսոնիքի Դիտուրք ընկերութիւններն որք  
միւսեւոյն նպատակով կազմուած էին, արդէն լու-  
ծուած են:

Հայ տարեկան գիւտն որ 404—408 թուա-  
կաններուն տեղի ունեցած է, Թուսոնիքի Հայու-  
թիւնը ժամանակին մեծ հանգիստարու-  
թեամբ տօնած է եւ անոր համար այս ևս  
րուայի մէջ մատուար քարեր շինել տուած եւ  
տոն օրը ծախած է ի նպատակ տեղադրելու երկ-  
սուն վարձարանաց. տոն քարքը պատրաստած էր  
վարձարանի Գրիգոր Գրամաճեան, ուսուցիչ  
Թուսոնիքի վարձարանաց. տոն քարքէն նմոյշ մը  
կ'ըրկեմ ձեզ առ ի հետաքրքրու թիւն. ...